

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Էռնեստ Մոդոնոյանի, Ռոբերտ Թովմայանի, Հրանտ Գրիգորյանի, Նահապետ Գևորգյանի, Մարտուն Գրիգորյանի, Ռուստամ Գասպարյանի, Կարո Կարապետյանի, Տիգրան Ստեփանյանի, Հարություն Ղարազյոզյանի, Մելիք Մանուկյանի, Սամվել Սարգսյանի, Վիկտոր Դալլաքյանի, Հայկ Սանոսյանի, Արմեն Պուրտոյանի, Վահե Հակոբյանի, Արսեն Ավագյանի, Արմեն Աբրահամյանի, Ավետ Ադոնցի, Ռուբիկ Հարությունյանի, Արմեն Մելիքյանի, Գոհարիկ Ենոքյանի, Արամ Սաֆարյանի, Նաիրա Զոհրաբյանի, Հրանտ Մադաթյանի, Վերսանդիկ Հակոբյանի, Արման Սահակյանի, Հակոբ Հակոբյանի և Արևիկ Պետրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի՝ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը հարկ վճարողի գրավոր դիմումին համապատասխան, մինչև **2010**

թվականի մայիսի 1-ը, նույն հոդվածով սահմանված պահանջների ապահովման դեպքում կարող է համարվել ընդհանուր կարգով (ավելացված արժեքի հարկ և շահութահարկ կամ եկամտահարկ) հարկման օբյեկտ: Հարկման ընդհանուր կարգը կիրառվում է, եթե հարկ վճարողի կողմից շահագործվող գազայցման (գազալիցքավորման) բոլոր կայաններում (կետերում) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան առկա է (առկա են) լիցքավորման բաշխիչ աշտարակ (աշտարակներ) կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պաշարային հանգույցից անմիջապես հետո տեղադրված են ճնշման կարգավորիչ (կարգավորիչներ) և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գազի կապարակնքված ծախսաչափ (ծախսաչափեր): Համաձայն նշված դրույթի՝ գազայցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողները վերոնշյալ պայմաններն ապահովելու դեպքում 2009 թվականի հուլիսի 1-ից (փաստացի երկու ամիս հետո) իրավունք կունենան անցնելու հարկման ընդհանուր կարգի:

Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոլիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշմանը համապատասխան, գազալիցքավորման կայաններում մինչև 2010 թվականի ապրիլի 15-ը պետք է տեղադրվեն բաշխիչ աշտարակներ:

Վերը նշված պայմաններում այնքան էլ հիմնավորված չէ երկու ամսվա (մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը) կամ մեկ տարվա համար օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը:

Միաժամանակ, գտնում ենք, որ գազալիցքավորման կայաններում ձեռք բերված գազի ճիշտ հաշվառումը բխում է սպառողների շահերից: Հետևաբար սպառողների, ինչպես նաև պետության շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է գազալիցքավորման կայաններում մատակարարված գազի ծավալը ճիշտ հաշվառող սարքերի տեղադրումը, ինչն սպառողների շահերի պաշտպանությունից բացի նաև անհրաժեշտ պայմաններ կստեղծի գազալիցքավորման կայանների համար հարկման արդարացի համակարգ կիրառելու նպատակով: Չափիչ սարքերի տեղադրման դեպքում գազալիցքավորման գործունեություն իրականացնողները, անցնելով հարկման ընդհանուր համակարգի, հնարավորություն են ստանում նաև օգտվելու ավելացված արժեքի հարկի՝ 58.35 մլն դրամի չափով չհարկվող շեմից:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հաստատագրված վճարը հաշվարկելիս հնարավոր կորուստները հաշվի առնելով ստացված գազը նվազեցվում է **12.5** տոկոսով: Ըստ էության, օրենքով սահմանվել են կիրառվող սարքավորումների տեխնիկական փաստաթղթերով սահմանված չափերից բավականին բարձր կորուստներ:

Այնուամենայնիվ, եթե սպառողների համար անհարմարությունները վերացնելու նկատառումով ներկայացված օրենքի նախագծի ընդունումն արդարացված է, ապա կարծում ենք, որ անհրաժեշտ է՝

1. Նախագծով սահմանվող դրույթներով ապահովել ստացված կամ իրացված գազի ճիշտ հաշվառումը: Ներկայումս ստացված գազի հաշվառումն իրականացվում է «Հայ-Ռուսգազարդ» ՓԲԸ-ի հաշվիչներով: Եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ իրացման ծավալների ճիշտ արտացոլման նկատմամբ հարկային մարմինը չի կարող ապահովել մշտական վերահսկողություն, ապա հաշվիչի խափանումը կարող է ֆիսկալ հետևանքներ ունենալ: Նման հետևանքներից հնարավոր կլինի խուսափել, եթե տեղադրված լինի հարկային մարմնի կողմից կապարակնքված երկրորդ հաշվիչը (եթե կայանում տեղադրված չեն օրենքով կամ կանոնակարգով նախատեսված չափիչ սարքեր):

2. Նախագծով սահմանվող դրույթներով ապահովել հարկային մարմնի ներկայացուցչի իրավունքը՝

1) ցանկացած պահին ծանոթանալու չափիչ սարքերի ցուցմունքներին և աշխատանքին,

2) համոզվելու, որ գազը ձեռք չի բերվում հաշվիչը շրջանցելով:

3. Սահմանել գազի իրացման գների վրա ազդելու մեխանիզմներ: Ներկա պահին գազի կորստի նորմայի կամ հարկման համակարգի ցանկացած փոփոխություն կարող է բերել իրացվող գազի գների բարձրացման, որը միշտ չէ, որ կարող է համարժեք լինել կատարված փոփոխություններին: Տնտեսավարող սուբյեկտների կողմից կիրառվող գների վերահսկման գործող մեխանիզմներն ավտոգազալիցքավորման պարագայում կիրառելի չեն: Հաշվի առնելով այս ոլորտում գների փոփոխության շրթայական ազդեցությունն այլ ոլորտներում կիրառվող գների վրա՝ կարծում ենք, որ ավտոգազալիցքավորման ոլորտի համար անհրաժեշտ են իրացման գների նկատմամբ պետական վերահսկողության առավել արդյունավետ այլ մոտեցումներ (լծակներ):

Իրավական տեխնիկայի առումով՝

1) 1-ին հոդվածում անհրաժեշտ է՝

ա. «ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» բառերը հանել՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **39**-րդ հոդվածի **2**-րդ մասի պահանջները,

բ. «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ հոդվածին.

2) 3-րդ հոդվածում անհրաժեշտ է՝

ա. «59» թիվը փոխարինել «59.3» թվով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 4-րդ հոդվածին,

բ. «բովանդակությամբ» բառը փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

3) 4-րդ հոդվածում «հանել» բառն անհրաժեշտ է փոխարինել «ուժը կորցրած ճանաչել» բառերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները, որոնց համաձայն իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ալավերդյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին**

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (07.07.1998թ., ՀՕ- 236) հոդված 8-ի «հոդվածով» բառից հետո ավելացնել «բացառությամբ հոդված 7-ի ժթ) կետի» բառերը:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «վերաբերյալ» բառից հետո ավելացնել «բացառությամբ հոդված 7-ի ժթ) կետով նախատեսված գործունեության դեպքում» բառերը:

Հոդված 3. *Հոդված 59³ շարադրել նոր բովանդակությամբ.*

«Ավտոտրանսպորտային միջոցների գազայցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ամսվա ընթացքում իրացված գազի ընդհանուր ծավալի նկատմամբ մեկ մետր խորանարդ գազի հաշվով 20 դրամ հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարը: Հաշվարկային դրույքաչափով հաստատագրված վճարի հաշվարկման համար ամսվա ընթացքում իրացված գազի ծավալը չի կարող պակաս լինել ամսվա ընթացքում ստացված գազի ծավալի 87.5 տոկոսից»:

Հոդված 4. Օրենքի 59⁴ եւ 59⁵ հոդվածները հանել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հիմնավորում

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի անհրաժեշտության մասին

Գործող օրենքով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում գազալցման (գազալիցքավորման) կայանում տեղակայված գազալցման (գազալիցքավորման) խողովակների քանակը: Դա պարտադրում է տնտեսավարողներին գազալցման (գազալիցքավորման) խողովակների քանակը հասցնել նվազագույնի, ինչը զգալի անհարմարավետություն է ստեղծում սպառողների համար: Օրենքով նաեւ նախատեսված է ամսվա ընթացքում ստացված եւ իրացված գազի ծավալի կարուստ` 12.5 տոկոսի չափով:

Սույն փոփոխությունը պայմանավորված է գազալցման (գազալիցքավորման) կայանների շահագործման պարզեցման եւ ծառայությունների մատուցման հարմարավետության անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ թույլ կտա հաստատագրված վճարի ամսական չափի հաշվարկումը պայմանավորել տնտեսավարողի տնտեսական գործունեությամբ:

Հեղինակներ` Էռնեստ Սողոմոնյան, Ռոբերտ Թովմասյան, Հրանտ Գրիգորյան, Նահապետ Գեւորգյան, Մարտուն Գրիգորյան, Ռուստամ Գասպարյան, Կարո Կարապետյան, Տիգրան Ստեփանյան, Հարություն Ղարազյոզյան, Մելիք Մանուկյան, Սամվել Սարգսյան, Վիկտոր Դալլաքյան, Հայկ Սանոսյան, Արմեն Պուրտոյան, Վահե Հակոբյան, Արսեն Ավագյան, Արմեն Աբրահամյան, Ավետ Ադոնց, Ռուբիկ Հարությունյան, Արմեն Մելիքյան, Գոհարիկ Ենոքյան, Արամ Սաֆարյան, Նաիրա Զոհրաբյան, Հրանտ Մադաթյան, Վերսանդիկ Հակոբյան, Արման Սահակյան, Հակոբ Հակոբյան, Արեւիկ Պետրոսյան